Securities (mln. drams)




Հաշվետու տարում բանկի ներդրումներն արժեթղթերում, նախորդ տարվա համեմատ, աճել են 1,6 մլրդ դրամով կամ 48.0%-ով, իսկ արժեթղթերի միջին տարեկան եկամտաբերությունը՝ 1.0 տոկոսային կետով՝ կազմելով 15.4%: Բանկը շարունակել է ակտիվ գործունեությունն արժեթղթերի երկրորդային շուկայում՝ համագործակցելով ինչպես խոշոր ինվեստիցիոն ընկերությունների, այնպես էլ ֆիզիկական անձանց հետ, որոնց թիվը կազմել է 9 հաճախորդ:

SECURITIES

As of 31.12.12, the Bank's investments in securities (securities available for sale, securities pledged under buyout agreements) made 7.7% of assets.

Արժեթղթերի միջին տարեկան եկամտաբերություն

Average annual profitability of securities



In the accounting year, compared with the previous year, the Bank's investments in securities decreased by AMD 1.6 bn or 48.0%, while the average annual profitability of securities grew by 1.0% to make 15.4%. The Bank was active in the secondary market of securities as well where it cooperated both with major investment companies and with individuals – total 9 customers.

ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ

Հաշվետու տարում արտարժույթային փոխարկումային շուկայում բանկի գործունեության ծավալային ցուցանիշները ներկայացնելու համար անդրադառնանք ստորև բերվող աղյուսակի տվյալներին:

OPERATIONS IN FOREIGN EXCHANGE MARKET

The indicators of the Bank's operations in foreign exchange market for the accounting year are given in the table below:

Ցուցանիշ Indicator	2010	2011	2012	2012/2011
ԱՄՆ դոլար, մլն. USD, mln	327.74	484.12	558.71	1.15 անգամ / times
ՌԴ ռուբլի, մլն. RUR, mln	2,567.36	12,977.56	10,723.17	0.83 անգամ / times
Եվրո, մլն. EUR, mln	65.02	63.94	100.69	1.57 անգամ / times

Աղյուսակի տվյալները վկայում են հաշվետու տարում ԱՄՆ դոլարով, Եվրո-ով գործարքների ծավալների աճի և ՌԴ ռուբլով գործարքների ծավալների նվազման մասին: Այսպես, 2012թ. ԱՄՆ դոլարով գործարքների ծավալները, նախորդ տարվա համեմատ, աճել են 74.59 մլն ԱՄՆ դոլարով՝ կազմելով 558.71 մլն ԱՄՆ դոլար, Եվրո-ով գործարքների ծավալը՝ 36.75 մլն Եվրո-ով՝ կազմելով 100.69 մլն Եվրո, իսկ ՌԴ ռուբլով գործարքների ծավալները նվազել են 2,254.4 մլն ՌԴ ռուբլով՝ կազմելով 10,723.17 մլն ՌԴ ռուբլի:

The data in the table show increase of USD and EUR transactions and decrease of RUR transactions. Thus, in 2012, compared with the previous year, the volume of operations in USD increased by USD 74.59 mln and amounted to USD 558.71 mln, the volume of EUR increased by EUR 36.75 mln and amounted EUR100.69 mln, while the transactions in RUR declined by RUR 2.254.4 mln and amounted to RUR 10,723.17 mln.

ՊԱՍԻՎՆԵՐ

Հաշվետու տարում, նախորդ տարվա համեմատ, բանկի պասիվներն աճել են 6.0%-ով, ընդ որում պարտավորություններն աճել են 6.6%-ով, իսկ ընդամենը կապիտալն աճել է 2.5%-ով:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է պասիվների կառուցվածքը երեք տարվա համեմատականով:

LIABILITIES AND CAPITAL

In the accounting year, compared with the previous year, the Bank's liabilities and capital increased by 6.0%. At that, the liabilities increased by 6.62%, and the total capital increased by 2.5%.

The structure of liabilities and capital for the past three years is given in the table below:

մլն. դրամ / mln. drams

Պասիվներ Liabilities and capital	31.12.10	%	31.12.11	%	31.12.12	%
Ընդամենը պարտավորություններ Total liabilities	41,791.7	82.42	51,063.2	84.70	54,434.9	85.20
Ընդամենը կապիտալ Total capital	8,912.1	17.58	9,221.9	15.30	9,454.8	14.80
Ընդամենը պասիվներ Total liabilities and capital	50,703.8	100.0	60,285.1	100.0	63,889.7	100.0

Աղյուսակի տվյալները վկայում են, որ բանկի ընդամենը պարտավորությունների տեսակարար կշիռն ընդամենը պասիվներում 0.5 տոկոսային կետով աճել է /84.7%-ից մինչև 85.2%/, իսկ սեփական կապիտալի տեսակարար կշիռը, համապատասխանաբար նվազել /15.3%-ից մինչև 14.8%/:

The data in the table indicate that the ratio of total liabilities in total liabilities and capital has increased by 0.5% (from 84.7% to 85.2%) and the owned capital ratio has decreased accordingly (from 15.3% to 14.8%).

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2012թ., նախորդ տարվա համեմատ, բանկի պարտավորություններն աճել են 6.6%-ով կամ 3,371.8 մլն. դրամով, իսկ երեք տարվա կտրվածքով՝ 12,643.3 մլն. դրամով կամ 30.3%-ով: Պարտավորությունների խոշորագույն հոդվածի՝ հաճախորդների նկատմամբ պարտավորությունների 2010թ. համեմատ 11,898.1 մլն. դրամով կամ 46.9%-ով, իսկ նախորդ տարվա համեմատ 4,128.3 մլն. դրամով կամ 12.5%-ով աճը վկայում է ինչպես նախորդ, այնպես էլ հաշվետու տարում արդյունավետ գործող հաճախորդների ներգրավման, ինչպես նաև բանկի նկատմամբ հաճախորդների վստահության շարունակական աճի մասին:

Պարտավորությունների շարժը և կառուցվածքն արտացոլված է գրաֆիկում և կցվող Աղյուսակ 2-ում:


LIABILITIES

In 2012, compared with the previous year, the Bank's liabilities increased by 6.6% or AMD 3,371.8 mln and by AMD 12,643 mln or 30.3% over the past three years. The growth of the most significant indicator, liabilities to customers, by AMD 11,898 mln or 46.9% compared with 2010 and by AMD 4,128.3 mln or 12.5% compared with the previous year is an evidence of attraction of efficiently operating customers as well as of continuous increase of customer confidence.

The movement and structure of liabilities are reflected in the chart below and attached Table 2.


Ընդամենը պարտավորություններ (մլն. դրամ)

Total liabilities (mln. drams)



Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ (մլն. դրամ)


Liabilities to customers (mln. drams)



Ընդամենը պարտավորություններ

Total liabilities

31.12.2012






ԿԱՊԻՏԱԼ

Հաշվետու տարում բանկի հուսալիության կարևորագույն չափանիշի՝ բանկի ընդհանուր կապիտալի աճն ապահովվել է հիմնականում ներքին աղբյուրի՝ շահույթի հաշվին: 2012թ. շարունակվել է բանկի ընդհանուր կապիտալի նախորդ տարիների ընթացքում դրսևորած կայուն աճի միտումը՝ նախորդ տարվա համեմատ աճելով 2.5% կամ 232.9 մլն. դրամ:

Ընդհանուր կապիտալ (մլն. դրամ)

Total capital (mln. drams)




Բանկի ընդհանուր կապիտալի բացարձակ արժեքի աճի արդյունքում բաժնետոմսերի հաշվեկշռային արժեքն աճել է 249.5 դրամով կամ 2.5%-ով, հասնելով 10,130.1 դրամի՝ 2500 դրամ անվանական արժեքի պայմաններում:

CAPITAL


In the accounting year, the growth of total capital, the most important indicator of the Bank's reliability, was accomplished on the account of the Bank's own resource, the profit. In 2012, the tendency of steady growth of the Bank's total capital of the earlier years continued; the growth was 2.5% or AMD 232.9 mln compared with the previous year.

մլն. դրամ
mln. drams



As a result of growth of the absolute value of the Bank's total capital, the balance-sheet value of the Bank's shares increased by AMD 249.5 or 2.5% to make AMD 10,130.1 at nominal value of AMD 2,500 per share.

դրամ
drams



Ստորև ներկայացվող աղյուսակում արտացոլված է 31.12.12թ. դրությամբ բանկի կանոնադրական կապիտալի կառուցվածքը.

The structure of the chartered capital as of 31.12.12 is shown in the table below:

Բաժնետեր Shareholder	Բաժնետերերի թվաքանակ Number of shareholders		Բաժնեմաս Shareholding	
	Ընդամենը Total	Տեսակարար կշիռը Ratio (%)	Գումարը (հազ դրամ) Amount (thousand drams)	Տեսակարար կշիռը Ratio (%)
Պետական ձեռնարկություններ State-owned enterprises	32	2.25	10,747.5	0.46
Ոչ պետական ձեռնարկություններ Private enterprises	237	16.67	794,197.5	34.04
Ֆիզիկական անձինք բանկի աշխատակիցներ Individuals/Bank employees	90	6.33	2,957.5	0.13
Այլ ֆիզիկական անձինք Other individuals	1063	74.75	1,525,435.0	65.37
ԸՆԴԱՄԵՆԸ TOTAL	1422	100.0	2,333,337.5	100.0




ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ

Հաշվետու տարում բանկի տոկոսային և նմանատիպ եկամուտները կազմել են 6,187.8 մլն դրամ՝ աճելով, նախորդ տարվա համեմատ, 700.5 մլն. դրամով կամ 12.8%-ով, իսկ երեք տարվա կտրվածքով՝ 1,251.0 մլն. դրամով կամ 25.3%-ով: Բանկի տոկոսային եկամուտների հիմնական մասը, ինչպես և նախորդ տարիներին, ձևավորվել է վարկային ներդրումներից և արժեթղթերից ստացված եկամուտներից:

Բանկի կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտները 2012թ., նախորդ տարվա համեմատ, նվազել են 85.0 մլն. դրամով կամ 6.6%-ով: Բանկի տոկոսային և կոմիսիոն եկամուտները երեք տարվա համեմատականորեն ներկայացված են ստորև բերվող գրաֆիկներով:

Տոկոսային և նմանատիպ եկամուտներ (մլն.դրամ)
Interest and similar income (mln. drams)




Ինչպես նախորդ տարիներին, 2012թ. ևս ուշադրության կենտրոնում է գտնվել կատարվող ծախսերի արդյունավետության և կառուցվածքի օպտիմալացման հիմնախնդիրը: Բանկի տոկոսային և նմանատիպ ծախսերը, նախորդ տարվա համեմատ, աճել են 20.5%-ով կամ 492.6 մլն. դրամով՝ կազմելով 2,894.4 մլն. դրամ: Միևնույն ժամանակ անձնակազմի գծով ծախսերն աճել են 0.5 մլն. դրամով կամ 0.02%-ով, իսկ այլ ծախսերը (ինկասսացիոն ծառայության, անվտանգության գծով, հարկեր և տուրքեր, գովազդի և ներկայացուցչական ու այլ ծախսեր) նվազել են 132.9 մլն. դրամով կամ 7.2%-ով: Բանկի տոկոսային, անձնակազմի գծով և այլ ծախսերը երեք տարվա համեմատականորեն ներկայացված են ստորև բերվող գրաֆիկներով:

INCOME AND EXPENSES

In the accounting year, the interest and similar income amounted to AMD 6,187.8 mln as it increased by AMD 700.5 mln or 12.8% compared with the previous year, or by AMD 1,251.0 mln or 25.3% over the past three years. The bulk of interest income, like in the previous years, came from loans and securities.


In 2012, the income from fees and other payments declined by AMD 85.0 mln or by 6.6% compared with the previous year. The Bank's income earned as interest and fees for the past three years is presented in the charts below:

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ (մլն. դրամ)
Fees and other income (mln. drams)




In 2012, the optimization of the structure and efficiency of costs continued to be in the Bank's focus. Compared with the previous year, the interest and similar expenses increased by 20.5% or AMD 492.6 mln to make AMD 2,894.4 mln. At the same time, personnel costs increased by AMD 0.5 mln or 0.02% and other expenses (cash transportation, security, taxes and duties, advertising and representational, etc.) declined by AMD 132.9 mln or 7.2%. The interest expenses, personnel costs, and other expenses for the past three years are presented in the charts below:


Տոկոսային և նմանատիպ ծախսեր (մլն. դրամ)
 Interest and similar expenses (mln. drams)



Անձնակազմի գծով ծախսեր (մլն. դրամ)
 Personnel expenses (mln. drams)



Այլ ծախսեր (մլն. դրամ)
 Other expenses (mln. drams)



Հաշվետու տարում վարկային կորուստների արժեզրկման ծախսը նվազել է 401.4 մլն. դրամով:

In the accounting year, the cost of devaluation of loan losses increased by AMD 401.4 mln.


ՀԱՇՈՒՅԹ, ՀԱՇՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐ

Բանկի գործունեության կարևորագույն գնահատականը նրա ձևավորած շահույթն ու շահութաբերությունն են: 2012թ. բանկի շահույթը կազմել է 345.5 մլն. դրամ, նախորդ տարվա 497.3 մլն. դրամի դիմաց:

Ստորև ներկայացվում են բանկի շահույթի, շահութաբերության տվյալները և շահաբաժինների վերաբերյալ գրաֆիկը.

Ցուցանիշ / Indicator	31.12.10	31.12.11	31.12.12
ROA (return on assets) / շահույթ ակտիվների միավորի նկատմամբ, %	0.69	0.82	0.54
ROE (return on equity) / շահույթ ընդհանուր կապիտալի նկատմամբ, %	3.95	5.39	3.65
EPS (earnings per share) / շահույթ 1 բաժնետոմսի նկատմամբ (AMD)	377.1	532.9	370.2
Շահույթ մլն դրամ / Profit, mln drams	352.0	497.3	345.5

Հաշվետու տարում բանկի գործունեության շահութաբերության հիմնական ցուցանիշները նվազել են: Այսպես, բանկի կառավարման արդյունավետությունը բնորոշող՝ միավոր ակտիվի նկատմամբ ձևավորված շահույթի գործակիցը նվազել է 0.28 տոկոսային կետով, իսկ բաժնետերերի տեսակետից կարևոր բնութագրիչ հանդիսացող միավոր կապիտալի նկատմամբ ձևավորված շահույթի գործակիցը՝ 1.74 տոկոսային կետով: Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի գործակիցը նվազել է 162.7 դրամով կամ 30.5%-ով:





Համաձայն բերված տվյալների 2011թ. արդյունքներով վճարված շահաբաժինների մեծությունը կազմել է 9% տարեկան:

PROFIT, DIVIDENDS

Profit and profitability are the most important indicators of the Bank's operation. In 2012, the Bank's profit amounted to AMD 345.5 mln. against AMD 497.3 mln. of the previous year.

The profit and profitability indicators and the chart of dividends are presented below:

The accounting year was marked by decline of the basic indicators of the Bank's profitability. Thus, the ratio of return on asset unit has declined by 0.28% and the ratio of profit on capital unit, a descriptive feature in terms of efficiency of management, an important feature from the viewpoint of shareholders, has declined by 1.74%. The ratio of earnings per share has declined by AMD 162.7 or 30.5%.



According to data, the profitability of dividends paid for 2011 performance results was 9% per annum.

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Բանկում ներդրված ռիսկերի կառավարման մշակույթը ենթարկվում է շարունակական կատարելագործման՝ ելնելով կայուն, հուսալի, արդյունավետ և ապահով գործունեության ծավալման նպատակներից, այդ գործընթացում առանձնահատուկ շեշտադրում կատարելով Բանկի բոլոր աշխատակիցների կողմից ռիսկերի էության ընկալման և դրանց համապատասխան արձագանքման վերաբերյալ գիտելիքների մակարդակի բարձրացման վրա:

Ռիսկերի կառավարման գործընթացը բաղկացած է Բանկի գործունեության ընթացքում հնարավոր ռիսկերի բացահայտման, նույնականացման, գնահատման, հսկողության, հաղորդակցման-հաշվետվության և գնահատված ռիսկերին արձագանքման փուլերից: Ընդ որում ռիսկերին արձագանքման փուլն իրականացվում է ռիսկից խուսափման, ռիսկի նվազեցման, ռիսկի ընդունման կամ ռիսկի փոխանցման տարբերակներով:

Ռիսկերի կառավարման գործընթացում ներգրավված են Բանկի կառավարման մարմինները, ղեկավարները և բոլոր ստորաբաժանումների աշխատակիցները՝ ռազմավարական խնդիրների սահմանման, բանկային գործունեությունը կանոնակարգող ընթացակարգերի, այլ ներքին իրավական ակտերի, ծրագրերի մշակման ընթացքում ռիսկերի բացահայտման, ինչպես նաև բանկային գործառնությունների կատարման ընթացքում դրանց հսկողության իրականացման միջոցով:

Ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով սահմանվում են ռիսկերի ընդունելի մակարդակները և ռիսկ-եկամուտ օպտիմալ հարաբերակցությունը, որոնք կապահովեն առաջադրված ընթացիկ և ռազմավարական նպատակների իրականացումը:

Ակտիվների և պասիվների կառավարման գործընթացի հիմքում ընկած են մշակված և շարունակաբար կատարելագործվող տնտեսամաթեմատիկական մոդելների միջոցով իրականացվող վերլուծությունները՝ ուղղված կառավարման արդյունավետության բարձրացմանը և ռիսկերի զսպման մեխանիզմների կիրառմանը: Տնտեսամաթեմատիկական մոդելավորման, գործընթացների կանոնակարգման, վերլուծության, կանխատեսման և ներքին հսկողության համակարգի կատարելագործման գործիքների հիման վրա՝ Բանկը հնարավորություն է ստանում նվազագույնի հասցնել գործունեության ընթացքում առկա ռիսկերով պայմանավորված հնարավոր կորուստները՝ ապահովելով գործող նորմատիվային դաշտի պահանջները, շահութաբերության, հուսալիության, անվտանգության և վճարունակության գործակիցների ընդունելի մակարդակները:

Բանկի Ռիսկերի կառավարման ստորաբաժանն անհրաժեշտ է կողմից առանձին ռիսկատեսակների գծով տվյալների հավաքագրման և վերլուծության հիման վրա իրականացվում է Բանկի գործունեության ռիսկայնության համակարգային գնահատում: Համախառն ռիսկի գնահատման և կառավարման տնտեսամաթեմատիկական մոդելը հնարավորություն է ընձեռում միկրո մակարդակի ռիսկերի գնահատման արդյունքների հիման վրա իրականացնելու Բանկի գործունեության ընդհանուր ռիսկայնության մակարդակի գնահատումը: Բանկի համախառն ռիսկը, նշված մոդելի շրջանակներում, կառավարվում է արտարժույթային, վարկային,

RISK MANAGEMENT

The risk management culture implemented in the Bank is subject to continuous improvement with a view to having stable, reliable, efficient, and safe operations with special emphasis on improving the personnel awareness in order to ensure full perception of and appropriate response to risks by them.

The risk management process includes phases that aim to reveal, identify, assess, monitor, communicate and report, and respond to the assessed risks throughout the Bank's operations. At that, the response phase may be accomplished through options including avoidance, reduction, acceptance, or transfer of risks.

The risk management process involves the Bank's managerial bodies, supervisors, and the personnel of all subdivisions in terms of setting strategic objectives, identification of risks during the development of procedures, programs, and other internal regulatory documents, as well as performing risk monitoring while executing banking operations.

For the purpose of efficient risk management, acceptable risk levels and optimal risk-income correlation are defined to ensure accomplishment of both current and strategic objectives.

The process of management of assets and liabilities is based on analyses performed through continuously improving economic-mathematical models, which aim to apply mechanisms designed to increase management efficiency and improve risk reduction. The use of economic-mathematical modeling and instruments for regulation and analysis of processes, forecast, and improvement of the internal control system allows the Bank to minimize possible losses induced by operational risks, meet the requirements of the existing standards, and maintain acceptable levels of profitability, reliability, safety, and solvency.

Based on collection and analysis of data per individual risk types performed by Bank's risk management subdivision, overall appraisal of the risk level in the Bank's operations is carried out. The economic-mathematical model of gross risk assessment and management offers an opportunity of assessing the general risk level in the Bank's activity based on assessments of micro-level risks. Within the framework of this model, the Bank's gross risk is managed through identification and monitoring of material scopes (levels) of foreign currency, credit, liquidity, and interest rate risks and their aggregate – gross risk level. The material risk levels are revised whenever necessitated by the Bank's strategic goals, market trends, and competition intensity as well as other changes in the environment. To assess the overall risk in Bank's operations, contamination risk which represents negative impacts of chain developments of existing economic problems on Bank's operation is separated and assessed. This risk is appraised through combined stress testing of foreign currency, credit, liquidity, and interest rate risks. Bank's regulatory documents contain the basic principles of risk assessment, assessment and management approaches, methodologies and models for individual risk types and gross and contamination risks, which are periodically



իրացվելիության և տոկոսադրույքի փոփոխման ռիսկերի և դրանց գումարային՝ համախառն ռիսկի էական չափերի (մակարդակների) սահմանման և մոնիտորինգի միջոցով: Ռիսկերի էական մակարդակները վերանայվում են ըստ անհրաժեշտության՝ ելնելով Բանկի ռազմավարական նպատակներից, շուկայում առկա միտումներից և մրցակցության մակարդակից, ինչպես նաև միջավայրի այլ փոփոխություններից: Բանկի գործունեության ռիսկայնության համակարգային գնահատման նպատակով առանձնացվում և գնահատվում է նաև վարակի ռիսկը, որը իրենից ներկայացնում է տնտեսության մեջ առկա խնդիրների հնարավոր շղթայական զարգացումների բացասական ազդեցություն բանկի գործունեության վրա: Տվյալ ռիսկը գնահատվում է արտարժույթային, վարկային, իրացվելիության և տոկոսադրույքի փոփոխման ռիսկերի համատեղ սթրես քեստավորման միջոցով: Բանկի գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտերում ներառված են ռիսկերի կառավարման հիմնական սկզբունքները, առանձին ռիսկատեսակների և բանկի համախառն և վարակի ռիսկերի գնահատման և կառավարման մոտեցումները, մեթոդաբանությունները և մոդելները, որոնք բանկի գործունեությունը կանոնակարգող մյուս ներքին փաստաթղթերին զուգընթաց, պարբերաբար վերանայվում են: Բանկի ռիսկերի կառավարման համակարգը ներքին և արտաքին միջավայրերում տեղի ունեցող փոփոխություններին, բանկի ռազմավարական խնդիրներին և իրականացվող գործառնությունների ծավալային և որակական բնութագրերին համապատասխանեցնելու նպատակով:

Ռիսկերի կառավարման համակարգի կատարելագործման գործընթացը, որպես Բանկի հեռանկարային զարգացման առումով կարևորագույն նշանակություն ունեցող գործոն, մշտապես գտնվում է Բանկի ղեկավարության ուշադրության կենտրոնում:

Համաձայն «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ «Ռիսկերի կառավարման քաղաքականության» պահանջների, հաշվի առնելով Բանկային վերահսկողության բազելյան կոմիտեի և GARP-ի (Generally Accepted Risk Principles) ռիսկերի կառավարման սկզբունքները՝ բանկում առանձնացվում են հետևյալ հիմնական ռիսկատեսակների գնահատման և կառավարման մոդելները.

- վարկային ռիսկ,
- տոկոսադրույքի փոփոխման ռիսկ,
- իրացվելիության ռիսկ,
- արտարժույթային ռիսկ,
- գործառնական ռիսկ:

ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿ

Վարկային ռիսկը վարկի, հաշվարկված տոկոսի կամ դրանց մի մասի պայմանագրով սահմանված ժամկետներից ուշացման կամ անվերադարձելիության հնարավոր վտանգն է՝ պայմանավորված վարկառուի ֆինանսական վիճակի վատթարացմամբ, գրավի արժեզրկմամբ և նման այլ պատճառներով:

Բանկում ներդրված մեթոդաբանությունը հնարավորություն է տալիս գնահատել և օպտիմալ կառավարել վարկային ռիսկը՝ որպես էկզոգեն փոփոխականներ ներառելով նաև էքսպերտային գնահատականները և նպաստելով վարկի տրամադրման հիմնավորված

revised along with other regulatory documents to keep the Bank's risk management system current with changes in internal and external environment as well as with the Bank's strategic objectives and operations in terms of their volume and quality.

The process of improvement of the risk management system is kept in permanent focus by the Management as a matter of utmost importance for Bank's prospective development.

Pursuant to ARMECONOMBANK OJSC Risk Management Policy and the principles of risk management of Basel Committee and GARP (Generally Accepted Risk Principles), models of assessment and management of the following basic risks have been adopted:

- Credit risk;
- Interest rate risk;
- Liquidity risk;
- Foreign currency risk;
- Operational risk.

CREDIT RISK

Credit risk is the possible danger of late or non repayment of a loan, accrued interest, or a part thereof or full or partial loss thereof due to worsening of borrower's financial condition, devaluation of the collateral, or other similar causes.

The methodology used in the Bank offers a possibility of assessing and optimally managing the credit risk through consideration, among others, of expert appraisals as exogenous variables to contribute to the making of well-reasoned credit decisions.

Stress tests and different possible scenarios are used to analyze and assess the impacts of different possible changes in loan portfolio structure on the indicators of the Bank's current operations. To assess the risk for the loan portfolio, the impact of certain shock situations on the minimum size of the Bank's total capital and adequacy standards is assessed. The risk level for the loan portfolio is assessed through analysis of the most probable scenarios and, based on assessment results, appropriate measures are taken to ensure the minimum risk level. Scenario analyses address both internal (deductions from main capital, structural changes in risk-weighted assets, etc.) and external (inflation, outflow of funds, etc.) factors. Within the limits of analysis of the aforementioned stress scenarios, calculation and analysis of critical points for deviations from the standards is performed to obtain data on probability of deviations for specific dates.

որոշումների կայացմանը:

Վարկային պորտֆելի կառուցվածքի հնարավոր տարբեր փոփոխությունների ազդեցությունները Բանկի գործունեության ընթացիկ ցուցանիշների վրա վերլուծվում և գնահատվում է սթրես թեստավորման և տարբեր հավանական սցենարների դիտարկման միջոցով: Բանկի վարկային պորտֆելի ռիսկայնության գնահատման նպատակով իրականացվում է Բանկի ընդհանուր կապիտալի նվազագույն չափի և համարժեքության նորմատիվների վրա որոշակի շոկային իրավիճակների ազդեցության գնահատում: Վարկային պորտֆելի ռիսկայնությունը գնահատվում է տարբեր հնարավոր սցենարների վերլուծության և առավել հավանական սցենարների դիտարկման միջոցով, որի արդյունքների հիման վրա ձեռնարկվում են ռիսկայնության նվազագույն մակարդակի ապահովմանն ուղղված համապատասխան միջոցառումներ: Սցենարային վերլուծություններում դիտարկվում են ինչպես ներքին գործոններ (հիմնական կապիտալից նվազեցումներ, ռիսկով կշռված ակտիվների կառուցվածքային փոփոխություններ և այլն), այնպես էլ արտաքին գործոններ (սղաճ, միջոցների արտահոսք և այլն): Վերոնշյալ սթրեսային սցենարների վերլուծության շրջանակներում իրականացվում է նաև նորմատիվների խախտման կրիտիկական կետերի հաշվարկ և վերլուծություն, որը տեղեկատվություն է տալիս տվյալ օրվա դրությամբ նորմատիվների խախտման հավանականության վերաբերյալ:

Վարկային պորտֆելի կենտրոնացումները գնահատվում են ըստ ֆիզիկական և իրավաբանական անձանց, ըստ մասնաճյուղերի, ըստ վարկերի խոշորության աստիճանի, ինչպես նաև ըստ արժույթների, որը հնարավորություն է տալիս վարկերի տեղաբաշխման վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում ներառել պորտֆելի դիվերսիֆիկացման գործոնը:

Վարկային ռիսկի կառավարման արդյունավետ համակարգի շնորհիվ Բանկի վարկային պորտֆելը շարունակում է պահպանել ավանդական բարձր որակը և ցածր ռիսկայնության աստիճանը:

ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՌԻՍԿ

Տոկոսադրույքի փոփոխման (տոկոսադրույքի) ռիսկը բանկի զուտ տոկոսային եկամտի կամ կապիտալի տնտեսական արժեքի վրա շուկայական տոկոսադրույքների փոփոխման բացասական ազդեցության հավանականությունն է:

Բանկում տոկոսադրույքների փոփոխման ռիսկը գնահատվում է «GAP մոդելի», «Դյուրացիայի մոդելի» և սթրես թեստերի կիրառմամբ, որոնց հիմքում ընկած է տոկոսադրույքների փոփոխման նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների դիսբալանսի վերլուծությունը, որին զուգահեռ իրականացվում է նաև ֆինանսական շուկայի և տնտեսության իրական հատվածի զարգացման միտումների մշտական վերլուծություն: Տոկոսադրույքի ռիսկի հնարավոր պոտենցիալ մակարդակի գնահատման տեսանկյունից կարևոր դեր ունեն կիրառվող սթրես թեստերը, որոնց միջոցով գնահատվում են տոկոսադրույքների փոփոխության նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավոր

The concentrations of the loan portfolio are assessed per individuals and corporate entities, branches, loan sizes, and currencies; this allows employing the portfolio diversification factor while making lending decisions.

Thanks to the efficient system of credit risk management, the loan portfolio continues to maintain its traditional high quality and low risk level.

INTEREST RATE CHANGE RISK

Interest rate risk is the probability of negative impact of changes of market interest rate on net interest income or economic value of the capital.

To assess the interest rate risk, the Bank uses GAP Model, Duration Model, and stress tests based on analysis of any imbalance between assets and liabilities that are sensitive to interest rate fluctuations parallel with permanent analyses of development trends both in financial market and in the real sector of the economy. In terms of assessment of the potential level of the interest rate risk, stress tests addressing possible losses in different situations involving assets and liabilities sensitive to interest rate fluctuations are quite important.

The aforementioned models allow hedging of the interest rate risk through well-substantiated managerial decisions related to arrangements for optimal asset-liability correlations.

The results of quarterly and annual scenario



րությունների գծով տարբեր իրավիճակներում հնարավոր կորուստների մակարդակը:

Նշված մոդելները հնարավորություն են տալիս ակտիվա-պասիվային օպտիմալ համամասնությունների ձևավորման հետ կապված կառավարչական հիմնավոր որոշումների կայացմամբ հեջավորել տոկոսադրույթի ռիսկը:

Եռամսյակային և տարեկան կտրվածքով իրականացվող՝ Բանկի զուտ տոկոսային եկամտի և կապիտալի վրա տոկոսադրույթների փոփոխության ազդեցության սցենարային վերլուծության և սթրես քեստավորման արդյունքները ներառվում են Բանկի հրապարակվող միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում և այլ հաշվետվություններում:

ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՌԻՍԿ

Իրացվելիության ռիսկը հավանականությունն է, որ բանկն ի վիճակի չի լինի ճիշտ ժամանակին բավարարել իր պարտատերերի պահանջներն առանց լրացուցիչ կորուստներ կրելու:

Ժամկետայնության ճեղքվածքների հիմնադրույթի կիրառման հիման վրա Բանկում ներդրված իրացվելիության ցուցանիշների գնահատման և կառավարման մեթոդաբանությունը հնարավորություն է ընձեռում հաշվարկված ակնթաղային, մինչև 90 օր և մինչև 1 տարի կուտակային իրացվելիության ցուցանիշների ժամանակային շարքերի հիման վրա գնահատել ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ճեղքվածքների ազդեցությունը Բանկի իրացվելիության վրա, որը հիմք է հանդիսանում ակտիվների և պարտավորությունների կառավարման օպտիմալ որոշումների կայացման համար:

Ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամկետային ավանդների որոշակի բաժնեմասի պայմանագրի ժամկետից շուտ ետ պահանջման և ցպահանջ պարտավորությունների որոշակի բաժնեմասի ետ պահանջման դեպքում (ինչպես նաև նշված բաժնեմասերի տարբեր հնարավոր համակցությունների դեպքում) նորմատիվների փոփոխությունների և դրանց խախտման հավանականության գնահատման նպատակով Բանկում կիրառվում է սթրես քեստավորման սցենարային մոդել, որը հնարավորություն է տալիս իրացվելիության նորմատիվների վրա շոկային տարբեր հնարավոր իրավիճակների ազդեցության գնահատման հիման վրա հաշվարկել նշված նորմատիվների խախտման կրիտիկական կետերը որպես Բանկի իրացվելիության ռիսկի այլընտրանքային գնահատականներ:

Բանկի կողմից ներգրավված ցպահանջ և ժամկետային միջոցների կենտրոնացումների ռիսկի գնահատման տնտեսամաթեմատիկական մոդելը, քվանտիլային վերլուծության մեթոդների հիման վրա, հնարավորություն է տալիս գնահատել ֆիզիկական և իրավաբանական անձանց ցպահանջ և ժամկետային միջոցների կենտրոնացումների մակարդակները, որի արդյունքում իրականացվում է նաև բանկի գործունեության վրա՝ հաճախորդներից ներգրավված միջոցների ետ պահանջման ազդեցության վերլուծություն: Նշված մոդելի շրջանակներում իրականացվում է ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված միջոցների

analyses and stress tests of the impact of interest rate changes on the Bank's net interest income and capital are included in the notes enclosed in the published interim and annual financial reports and other data sheets.

LIQUIDITY RISK

Liquidity risk is the probability that the Bank may not be able to timely satisfy the claims of its borrowers without suffering additional losses.

The methodology of assessment and management of liquidity indicators based on maturity gaps concept implemented in the Bank allows assessing the impact of maturity gaps of assets and liabilities on the Bank's liquidity based on temporal ranges of the indicators for instant, up to 90 days, and up to 1 year accumulating liquidity, which becomes a basis for making optimal decisions on management of assets and liabilities.

To assess the changes of the standards and the probability of deviations in the event of pre-term withdrawal of both a part of term deposits by individuals and companies and a part of on-demand liabilities (as well as various possible combinations of such portions), scenario stress-test models are employed to calculate the critical points for deviations from liquidity standards as alternative estimates of the Bank's liquidity risk based on the assessment of various probable shock situations on such standards.

Based on quantile analysis methods, the economic-mathematical model of assessment of the concentration risk for on-demand and term resources attracted by the Bank allows to assess the concentration levels of the resources attracted from individuals and corporate entities and so to analyze the impact of any withdrawal of such resources on the Bank's operations. The model includes calculation of the concentration coefficients of the resources attracted from individuals and corporate entities, analysis of their dynamics, calculation of total weighted average concentration, quantile and graphical analyses of concentrations, as well as analysis of the possible impact of the concentration risk on liquidity standards based on stress test methodology.

Based on analysis results, measures are taken to diversify the facilities attracted from individuals and companies and minimize the concentration risk.

կենտրոնացվածության գործակիցների հաշվարկ, դրանց դինամիկայի վերլուծություն, բանկի ընդհանուր կշռված միջին կենտրոնացվածության հաշվարկ, կենտրոնացվածության քվանտիլային և գրաֆիկական վերլուծություն, ինչպես նաև իրացվելիության նորմատիվների վրա կենտրոնացվածության ռիսկի հնարավոր ազդեցության վերլուծություն՝ կիրառելով սթրես թեստերի մեթոդաբանությունը:

Վերլուծության արդյունքների հիման վրա իրականացվում են ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրաված միջոցների դիվերսիֆիկացմանը և կենտրոնացումների ռիսկի նվազագույն մակարդակի ապահովմանն ուղղված միջոցառումներ:

ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՌԻՍԿ

Արտարժույթային ռիսկը արտարժույթի փոխարժեքների տատանման արդյունքում բանկի կորուստներ կրելու հավանականությունն է:

Բանկում արտարժույթային ռիսկի կառավարումն իրականացվում է կիրառելով միջազգային պրակտիկայում ընդունված VAR մեթոդաբանությունը, ինչպես նաև սթրես թեստերի սցենարային վերլուծության մեթոդները: Սթրես թեստերի սցենարային վերլուծություններում դիտարկվում է արտարժույթի փոխարժեքի կտրուկ տատանման ազդեցությունը նորմատիվների վրա:

Արտարժույթային ռիսկի նվազագույն մակարդակի ապահովման նպատակով կիրառվող, VAR մեթոդաբանության հիմքի վրա մշակված, արտարժույթների փոխարժեքների տատանումներից հնարավոր առավելագույն վնասների գնահատման տնտեսամաթեմատիկական մոդելը հնարավորություն է տալիս գնահատել բանկի արտարժույթային բաց դիրքերով պայմանավորված հնարավոր կորուստների ռիսկը: Վերոհիշյալ մոդելը հնարավորություն է տալիս գնահատել առանձին արտարժույթների գծով և ընդհանուր արտարժույթային ակտիվների և պարտավորությունների փաթեթի գծով առկա ռիսկի (հնարավոր առավելագույն վնասի) չափը որոշակի հուսալիության մակարդակով, որը հիմք է հանդիսանում արտարժույթով ակտիվների և պարտավորությունների կառավարման օպտիմալ որոշումների կայացման համար: Արտարժույթային ռիսկի գնահատման տնտեսամաթեմատիկական մոդելի հաշվարկներն ավտոմատացված են համապատասխան ալգորիթմի վրա հիմնված ծրագրային կիրառական փաթեթով:

Արտարժույթի փոխարժեքների փոփոխության ազդեցությունը բանկի շահույթի վրա գնահատվում է նաև եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ սթրես թեստերի սցենարային վերլուծության միջոցով, որի արդյունքները ներառվում են բանկի հրապարակվող միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում:

Բանկի արտարժույթային քաղաքականությունը միտված է արտարժույթային դիրքերի արդյունավետ կառավարման ապահովմանը՝ զուգակցելով այն արդարացված ռիսկի մակարդակի հետ:

FOREIGN CURRENCY RISK

Foreign exchange risk is the probability of losses for the Bank due to currency exchange rate fluctuations.

The management of foreign currency risk is performed through internationally accepted VAR methodology and scenario analyses of stress tests. These analyses address the impact of rapid fluctuations of foreign currency exchange rates on prudential standards.

The economic-mathematical model of assessment of maximum losses probable due to fluctuations of foreign currency exchange rates – as developed based on VAR methodology and used to ensure the minimum level of foreign currency risk – allows assessing the risk of losses conditioned by open foreign exchange positions of the Bank. This model offers certain reliability of assessment for the risk (maximum possible loss) both per individual currencies and per the entire package of foreign currency assets and liabilities to make decisions on optimal management of foreign currency assets and liabilities. The calculations within the economic-mathematical model of foreign currency risk assessment are automated through a software application based on a corresponding algorithm.

The impact of foreign currency fluctuation on the Bank's profit is assessed quarterly and annually as well – by means of scenario analysis of stress tests – and the results are included in the notes enclosed in the published interim and annual financial reports.

The Bank's foreign currency policy aims to ensure efficient management of foreign exchange positions combined with justified risk level.



ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՌԻՍԿ

Բանկային հիմնական և օժանդակ բիզնես-գործընթացների յուրաքանչյուր բաղադրիչ գործառնականություն որոշակի մակարդակի գործառնական ռիսկի պոտենցիալ կրող է, որը կարող է հանգեցնել ինչպես փոքր, այնպես էլ Բանկի համար էական չափերի հասնող կորուստների, որով էլ պայմանավորված է գործառնական ռիսկի արդյունավետ կառավարման կարևորությունը և առաջնային նշանակությունը:

Բանկի ռիսկերի կառավարման ոլորտը կանոնակարգող ներքին իրավական ակտերով գործառնական ռիսկը սահմանվում է որպես ուղղակի կամ անուղղակի կորուստների վտանգ՝ առաջացած կամ պայմանավորված բանկի անձնակազմի ոչ համարժեք կամ սխալ (պատահական, միտումնավոր) գործողություններով, բանկային գործընթացների կազմակերպման և կատարման թերություններով, խափանումներով (սարքավորումների տեխնիկական անսարքություն, ընթացակարգերի անկատարություն), ինչպես նաև արտաքին միջավայրի անբարենպաստ գործողություններով և իրավիճակներով (խարդախություն, տարերային աղետ):

Գործառնական ռիսկի ներդրված արդյունավետ կառավարման համակարգի կիրառումը ենթադրում է ըստ գործառնական ռիսկի դասակարգման խմբերի հետևյալ նպատակների իրականացման ապահովում՝

- Բանկի կառուցվածքի ռիսկի գծով՝ կառուցվածքի ֆունկցիոնալ անարդյունավետության բացառում,
- գործընթացի ռիսկի գծով՝ անարդյունավետ գործընթացների բացահայտում և վերանայում,
- մարդկային ռիսկի գծով՝ ներքին և արտաքին խարդախությունների, պատահական սխալների բացառում,
- տեխնիկական ռիսկի գծով՝ բանկային գործառնությունների կատարման անընդհատության ապահովում, տեխնիկական, ծրագրային ապահովման և սպասարկող համակարգերի խափանումների բացառում,
- իրավական ռիսկի գծով՝ հաճախորդների, գործընկերների, անձնակազմի հետ հարաբերություններում առկա ռիսկերի նվազեցում,
- ֆիզիկական միջամտության ռիսկի գծով՝ տարերային աղետների, հրդեհների, ահաբեկչության և այլ նմանատիպ ռիսկերի զսպման ուղղված միջոցառումների իրականացում:

Գործառնական ռիսկի վերահսկողության արդյունավետ համակարգի կիրառումն ապահովվում է օրական հսկողության իրականացման, պարբերական և թեմատիկ ստուգումների միջոցով գործող կանոնակարգվածության մակարդակի պատշաճության գնահատման, կանոնակարգման կարիք ունեցող գործառնությունների վերհամեմատման, հնարավոր ռիսկերի բացահայտման և պատասխանատու մարմիններին դրանց մասին տեղեկացման միջոցով:

Բանկի հիմնական բիզնես-գործընթացների նկարագրման սխեմատիկ մոդելների հիման վրա իրականացվում է բիզնես-գործընթացների յուրաքանչյուր փայլի հնարավոր ռիսկերի և բացասական իրադարձությունների բացահայտում, նույնականացում և գնահատում, ինչպես նաև սահմանվում են դրանց կանխարգելմանը և նվազեցմանն ուղղված միջոցառումներ:

Գործառնական ռիսկի կառավարման շրջանակներում ենթադրվում է նաև կորուստների նվազեցման

OPERATIONAL RISK

The priority and significance of efficient management of the operational risk is conditioned by the fact that each element of the main and auxiliary business operations is a potential source of a certain level of operational risk which may lead to either small or material losses for the Bank.

The internal legal acts regulating the Bank's risk management area define the operational risk as a danger of direct or indirect losses caused or conditioned by inadequate or incorrect (accidental or intentional) activities of the personnel, weaknesses in organization and execution of the Bank's operations, breakdowns (technical breakdown of equipment, imperfectness of procedures) as well as by adverse activities and situations in the environment (fraud, natural disasters).

The implemented system of efficient management of operational risk implies accomplishment of the following objectives in terms of operational risk classification groups:

- For structural risk: elimination of functional inefficiency of the structure;
- For procedural risk: identification and revision of inefficient procedures;
- For human risk: prevention of insider and outsider fraud and accidental errors;
- For technical risk: ensuring of the continuity of banking operations, prevention of breakdowns of equipment, software, and supporting systems;
- For legal risk: reduction of risks in relationships with customers, partners, and personnel;
- For physical intervention risk: measures to reduce risks related to natural disasters, fire, terrorism, and other similar occurrences.

The implementation of an efficient system of control of operational risk is achieved through daily monitoring, assessment of the adequacy level of the existing regulations by periodical and subject-specific checks, identification of processes requiring regulation, identification of possible risks and communication thereof to the authorities in charge.

Currently, based on schematic models of description of the Bank's main business operations, discovery, identification, and assessment of possible risks and negative events related to execution of each phase of business operations is carried out and measures aimed to prevent and reduce such risks are determined.

In the framework of the operational risk management, it has been planned to carry out study, assessment, and implementation of insurance measures aimed to reduce the losses considering the extent of their efficiency.

ուղղված ապահովագրական միջոցառումների ուսումնասիրում, գնահատում և ներդրում՝ հաշվի առնելով դրանց արդյունավետությունը:

ԲԱՆԿԻ ՆԵՐՔԻՆ ՇԱԿՈՂՈՒԹՅԱՆ ՇԱՄԱԿԱՐԳ

Բանկում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ներքին հսկողության գործունեության արդյունավետ համակարգի շարունակական զարգացման գործընթացին՝ ապահովելով մատուցվող ծառայությունների, կատարվող գործառնությունների հստակ կանոնակարգումը: Բանկի ներքին հսկողության պատշաճ ապահովման կարևոր գրավականներից է ներքին վերահսկողության համակարգի արդյունավետ գործունեությունը: Դրա հետ կապված նշենք, որ հաշվետու տարում իրականացվել է բանկի տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների թվով 54 համալիր վերստուգումներ, դուստր և կախյալ ընկերություններում թվով 2 ուսումնասիրություններ, տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների դրամարկային հանգույցների թվով 18 գույքագրումներ, ինչպես նաև բանկի հաշվապահական հաշվառման վարման հստակությանը, ռիսկերի նվազմանը, գործող կարգերին և մշակված պայմանագրերին ու Բանկի գործունեության այլ ոլորտներին վերաբերվող թվով 12 նպատակային վերստուգումներ:

Նշված վերստուգումների և ուսումնասիրությունների արդյունքների ամփոփումը և վերլուծությունը նպատակաուղղվել է գործող թերությունների վերացմանը, բացահայտված ռիսկերի կանոնակարգմանը, կանխարգելիչ միջոցառումների մշակմանը և այդ ամենի արդյունքում բանկի գործունեության ընդհանուր ռիսկայնության նվազեցմանը և պատշաճ հսկողության ապահովմանը:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՇԱՃԱԽՈՐԴՆԵՐ

ՇԱՃԱԽՈՐԴՆԵՐ

«ՀԱՅԵԿՈՆՈՍԲԱՆԿ» ԲԲԸ-ն, հանդիսանալով ունիվերսալ կառույց, իր գործունեությունը նպատակաուղղում է հաճախորդներին ծառայությունների ընդգրկում փաթեթով ապահովմանը, որը ենթադրում է մատուցվող ծառայությունների մշտական բազմազանում և սպասարկման որակի բարձրացում: Հաշվետու տարում կատարելագործվել են վճարահաշվարկային ծառայությունների մատուցման ընթացակարգերը՝ հնարավորինս պարզեցնելով դրանք ի նպաստ հաճախորդի:

«ՀԱՅԵԿՈՆՈՍԲԱՆԿ» ԲԲԸ հաջողությունների կարևորագույն գրավականը հաճախորդների արդյունավետ սպասարկումն է: Բանկի հաճախորդները գտնվում են մշտական ուշադրության կենտրոնում և արվում է ամենայն հնարավորն առավել ընդգրկում բավարարելու նրանց պահանջարկը բարձրակարգ բանկային ծառայությունների նկատմամբ, որը ենթադրում է մատուցվող ծառայությունների մշտական բազմազանում և սպասարկման որակի բարձրացում: Բանկը հաճախորդներին առաջարկում է բանկային ժամանակակից ծառայություն-

INTERNAL CONTROL SYSTEM

The Bank pays special attention to continuous development of an efficient system of internal control to ensure clear regulation of its services and operations. One of the guarantees of having adequate internal control in place is the efficient operation of the Bank's internal audit system. With respect to this, we should mention that in the accounting year 54 overall audits of territorial and structural subdivisions, 2 studies of subsidiary and dependent companies, 18 audits of teller sectors in territorial and structural subdivisions as well as 12 purpose-specific audits related to accuracy of accounting, risk reduction, existing procedures and agreements, and other areas of the Bank's activities were carried out.

The summary and analysis of the results of the aforementioned audits and studies were used for elimination of the existing weaknesses, regulation of the revealed risks, and development of preventive measures to reduce the overall risk and ensure appropriate control.

SERVICES AND CUSTOMERS

CUSTOMERS

As a universal institution, ARMECONOMBANK OJSC aims its activities at offering its customers comprehensive service packages, which implies continuous diversification of services and improvement of service quality. In the accounting year, the Bank revised and optimized the procedures of clearing services to make them as simple as possible in favor of customers.

Efficient customer service is a major guarantee of success for ARMECONOMBANK OJSC. The customers are in constant focus and the Bank has been doing the utmost to fully satisfy their demand for high-quality banking services, which in its turn means continuous work on further diversification and improvement of the services offered. The Bank offers its customers a wide range of services and technologies not only to satisfy their present needs, but also to develop new demands for services. The continuous updating and standardization of the services is a matter of the management's permanent attention. The regular monitoring and surveys enable the Bank to classify the



ների և տեխնոլոգիաների ընդգրկումն փաթեթ, որը նպատակ ունի ոչ միայն բավարարել առկա պահանջարկը, այլ նաև ձևավորել նոր պահանջարկ առաջարկվող ծառայությունների նկատմամբ: Ծառայությունների անընդհատ թարմացումը և ստանդարտացումը մշտապես գտնվում են բանկի ղեկավարության ուշադրության կենտրոնում: Պարբերական մոնիտորինգը և հարցումները թույլ են տալիս բանկին թե՛ տարածքային, թե՛ իրավական կարգավիճակի, թե՛ տարիքային և սոցիալական խմբերի դասակարգմամբ արագ արձագանքել նոր պահանջարկի բավարարմանը, մատուցվող ծառայությունների կատարելագործմանը, որն իր դրական արտացոլումն է գտնում սպասարկման որակի, նոր հաճախորդների ներգրավման և ըստ այդմ բանկի եկամուտների ավելացման վրա:

Հաշվետու տարվա մատուցված նոր ծառայություններից հատկանշական է այն, որ բանկը սկսեց ֆիզիկական անձանց տրամադրել «Ուսանողական» և «Այլ անձանց երաշխավորությամբ» վարկեր, միջազգային վճարահաշվարկային համակարգերով գումարներ ստացող ֆիզիկական անձանց սկսեց տրամադրել վարկային գծեր, թողարկեց «ArCa Gold Paradox» co-branded քարտեր, սկսեց տրամադրել անկանխիկ ոսկու նվեր քարտեր:

Հաշվետու տարում ի լրումն այլ վճարային համակարգերի, բանկը սկսեց փոխանցումներ իրականացնել նաև «Avers», «Unistream» և «Golden Money Transfer» վճարային համակարգերով:

Հաշվետու տարում հաջողվեց 2,301-ով կամ 2.2%-ով ավելացնել հաճախորդների քանակը՝ ներգրավելով հեռանկարային, կայուն զարգացող հաճախորդների, ինչը հնարավորություն տվեց ավելացնել բանկի միջին տարեկան ցպահանջ միջոցների մնացորդները:

31.12.12թ. դրությամբ բանկը սպասարկում է ավելի քան 108.5 հազար հաճախորդների, որոնց դասակարգումն ըստ իրավական կարգավիճակի և տարածաշրջանների ներկայացված է գրաֆիկներով:



customers by legal status, age, and social groups and rapidly respond to any new demands and needs for further improvement of services, which in its turn has positive impact on the servicing quality, attraction of new customers and, accordingly, on the earnings.

Among the new services launched in the accounting year we should note Student Loans and Loans Against Third Persons' Guarantee offered to individuals. The individuals who receive money through international clearing systems are offered credit lines. Also in the accounting year, the Bank launched ArCa Paradox co-branded cards and began to offer non-cash gold gift cards.

In the accounting year, in addition to other clearing systems, the Bank began to effect money transfers through Avers, Unistream and Golden Money Transfer.

In the accounting year, the Bank increased the number of its customers by 2,301 or 2.2% as it attracted prospective and steadily developing customers and this in its turn resulted in growth of average annual balances of on-demand cash facilities.


As of 31.12.12, the Bank had more than 108.5 thousand customers. Their classification per legal status and location is presented in the following charts.



ԿՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բանկի կողմից մատուցվող վճարահաշվարկային և փաստաթղթային ծառայություններն առանձնահատուկ տեղ են գրավում հաճախորդներին առաջարկվող ծառայությունների շարքում: Բանկն ակտիվորեն օգտագործում է առկա համակարգերի հնարավորությունները՝ արդյունավետ աշխատանքներ ծավալելով նաև վճարման նոր ձևերի մշակման ու ներդրման առումով: Այսպես, բանկը դրամական փոխանցումներ է իրականացնում «MoneyGram», «Anelik», «Արագ Փոստ», «Ria Money Transfers», «Coinstar», «IntelExpress», «Avers», «Unistream» և «Golden Money Transfer» համակարգերով՝ իր հաճախորդին տալով ընտրության լայն հնարավորություն: Հաշվետու տարում վճարահաշվարկային ծառայություններից ստացված եկամուտները կազմել են 651.2 հազ. ԱՄՆ դոլար: Ստորև բերվող գրաֆիկում ներկայացված է փոխանցումների ծավալները երեք տարվա համեմատականով:

Փոխանցումներ (հազ. ԱՄՆ դոլար)
Transfers (thous. USD)



Բանկն առաջատար դիրքեր է գրավում ՀՀ փաստաթղթային գործառնությունների շուկայում՝ ակտիվ գործունեություն ծավալելով ինչպես չեկերի թողարկման և սպասարկման, այնպես էլ փաստաթղթային գործառնությունների այլ ոլորտներում, հատկապես ակրեդիտիվների թողարկման և սպասարկման բնագավառում:

CLEARING SERVICES, DOCUMENTARY OPERATIONS

The clearing and documentary services have a special place in the range of services offered by the Bank. The Bank makes extensive use of the possibilities of the existing clearing systems and, at the same time, efficiently works on development and implementation of new payment methods. Currently, it executes money transfers through MoneyGram, Anelik, Bistraya Pochta, Migom, Blizko, Ria Money Transfers, Contact, Coinstar and IntelExpress, Avers, Unistream, and Golden Money Transfer systems, thus offering its customers a wide choice. In the accounting year, the earnings from such clearing services amounted to USD 651.2 thousand. The volumes of transfers for the past three years are given below:

